

## ՀՀ Ֆինանսների նախարարություն

### Հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողով

Ո Ր Ո Շ ՈՒ Մ 24/3

21 հոկտեմբերի 2014 թ.

Քննարկվեց «Լյուդարսու» ՍՊԸ գանգատը ՀՀ ՖՆ Գավառի ՏՀՏ 25.08.2014 թ-ի թիվ 6101613 ստուգման ակտի դեմ:

#### **«Լյուդարսու» ՍՊԸ գանգատում բերված փաստարկները.**

«Լյուդարսու» ՍՊԸ-ն (այսուհետ նաև ընկերություն) հիմնադրվել է 11.08.2011 թ-ին և նույն թվականից իրականացնում է առևտրային գործունեություն ՀՀ Գեղարքունիքի մարզի Մարտունի քաղաքի 24/1 հասցեում: Ընկերությունը ունի երկու աշխատող և տարեկան վճարում է մոտ 4.5 մլն դրամի տարբեր հարկատեսակներով հարկեր և վարձակալական վճարներ: Հանդիսանում է կարգապահ և բարեխիղճ հարկատու ու այս կարճ ժամանակահատվածում փորձ է արվում ընդլայնել գործունեությունը, ոտքի կանգնել, ստեղծել լրացուցիչ աշխատատեղեր:

Ընկերությունն իր աշխատանքները հարկային մարմնի հետ նույնպես կառուցել է գործընկերային և փոխադարձ հարգանքի վրա, սակայն ընկերության նկատմամբ Գավառի տարածքային հարկային տեսչության կողմից իրականացվող հարկային քաղաքականությունն ազնիվ և արդար չէ: Այսպես, 29.07.2014 թ-ին ընկերությունը կատարել է 150.000 դրամի վճարում «էկենգ» ՓԲԸ-ին նոր սերնդի ՀԴՄ-ների ներդրման համար, այն էլ ՊԵԿ-ի էլեկտրոնային համակարգով: ՊԵԿ-ի կողմից ստացվել է ծանուցում, որ ներկայացված հաշվետվությունը ընդունված է: Սակայն հետագայում պարզվել է, որ նոր սերնդի ՀԴՄ-ների ներդրման համար փոխանցումներ իրականացվում են «ՀԴԳՄ» ՊՈԱԿ-ին: Այսինքն, տեղի է ունեցել տեխնիկական սխալ, թյուրիմացություն:

14.08.2014 թ-ին ընկերության Երևանյան-24/1 հասցեում գործող առևտրի կետում ՀՀ ՖՆ Գավառի տարածքային հարկային տեսչության ընթացիկ հսկողության բաժնի հարկային տեսուչների կողմից կատարվել է հսկիչ գնում և արձանագրվել է խախտում: Արդյունքում կազմվել է թիվ 6101613 ստուգման ակտի նախագիծը, որով արձանագրվել է «ՀԴՄ-ների կիրառման մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 1-ին կետի խախտում, այն է՝ հարկային մարմնում նշված վայրի հասցեով գրանցված նոր սերնդի ՀԴՄ-ի բացակայություն: Այսինքն, տեսուչները կատարել են 1 հատ միքսերի գնում 9000 դրամ արժողությամբ, որի համար տրամադրվել է էլվես Միկրո Ֆ տեսակի ՀԴՄ կտրոն 24250453 համարի: Տեսչության կողմից վերոնշված տեխնիկական թյուրիմացության հանգամանքը հաշվի չի առնվել, բացի այն, որ որպես իրենց բարեխիղճ հարկատուի հաշվի չի առնվել նաև վերոնշված հիմնավորումները: Այդ հիմքով ընկերությունը դիմել է տարածքային հարկային տեսչություն՝ ակտն առոչինջ ճանաչելու համար, սակայն դիմումը գրավոր մերժվել է:

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ ընկերությունը խնդրում է քննարկել սույն գանգատը և թիվ 6101613 ակտը վերացնել, հաշվի առնելով, որ նոր սերնդի ՀԴՄ-ի բացակայությունը հանդիսացել է ընդամենը տեխնիկական սխալի պատճառ և այն ձեռք բերելու համար գումարն արդեն իսկ վճարված է եղել:

**ՀՀ ֆինանսների նախարարության հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովի եզրակացությունը.**

ՀՀ ՖՆ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ նաև Հանձնաժողով), ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերն ու ապացույցները եկավ հետևյալ եզրակացության:

Քննարկման ընթացքում նշվեց, որ ՀՀ ՖՆ Գավառի ՏՀՏ պետի 13.08.2014 թ-ի թիվ 6101613 հանձնարարագրի համաձայն «Լյուդարսու» ՍՊԸ-ում կատարվել է հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման ճշտության ստուգում: Արդյունքում կազմվել է ՀՀ ՖՆ Գավառի ՏՀՏ 25.08.2014 թ-ի թիվ 6101613 ստուգման ակտը (այսուհետ նաև ստուգման ակտ), որով լրացուցիչ գանձման է առաջադրվել 300.000 դրամ:

Ստուգման ակտի 1-ին կետով մասնավորապես արձանագրվել է, որ 13.08.2014 թ-ին, ժամը 15:14-ին, ՀՀ Գեղարքունիքի մարզ, ք.Մարտունի, Երևանյան 24/1 հասցեում տեղակայված «Լյուդարսու» ՍՊԸ-ին պատկանող առևտրի սրահից կատարվել է 9000 դրամի գնում՝ գնվել է հարիչ: Աշխատողի կողմից ՀԴՄ-ն շահագործվել է և տրամադրվել է համապատասխան գումարի ՀԴՄ կտրոն, սակայն նոր սերնդի ՀԴՄ-ի բացակայության պատճառով նոր սերնդի ՀԴՄ կտրոն չի տրամադրվել:

Ստուգմամբ պարզվել է, որ տնտեսվարող սուբյեկտի կողմից խախտվել են ՀՀ կառավարության 03.07.2014 թ-ի թիվ 662-Ն որոման պահանջները, որի համաձայն 30.0 մլն դրամից մինչև 58.35 մլն դրամ իրացումից հասույթ ունեցող հարկ վճարողների համար նոր սերնդի ՀԴՄ-ների ներդրման վերջնաժամկետ է սահմանվել 2014 թ-ի օգոստոսի 1-ը: Արդյունքում կիրառվել է «Հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 1-ին կետի բ) ենթակետով նախատեսված տուգանքը՝ գումարով 300.000 դրամ:

Վերոգրյալի կապակցությամբ հարկ է նշել, որ ստուգման ակտում որպես պատասխանատվության կիրառման համապատասխան իրավական հիմք, հղում է կատարվել «Հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 1-ին կետի բ) ենթակետին, որի համաձայն. «Սույն օրենքով սահմանված դեպքերում հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառումը պարտադիր լինելու դեպքում կանխիկ դրամով կամ պլաստիկ քարտերի միջոցով դրամական գործարքներ իրականացնելու պահին և վայրում հարկային մարմնում այդ վայրի հասցեով գրանցված հսկիչ-դրամարկղային մեքենայի բացակայության կամ հարկային մարմնում այդ վայրի հասցեով հսկիչ-դրամարկղային մեքենա գրանցված չլինելու համար կազմակերպությունը կամ անհատ ձեռնարկատերը տուգանվում է՝

...

բ) երեք հարյուր հազար դրամի չափով՝ գործունեության այլ տեսակների մասով»:

Հանձնաժողովը գտնում է, որ քննարկվող դեպքում ընկերության կողմից խախտվել են ոչ թե ստուգման ակտում նշված «Հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 1-ին կետի բ) ենթակետի դրույթները, այլ՝ նույն հոդվածի 3-րդ կետի դրույթները, որի համաձայն. «Սույն օրենքի 7-րդ հոդվածի «դ» կետով սահմանված՝ համապատասխան ժամկետից հետո հսկիչ-դրամարկղային մեքենայի միջոցով օրվա ընթացքում իրականացված դրամական հաշվարկների հանրագումարի վերաբերյալ ցանցային կապուղիների միջոցով տեղեկության ուղարկումն իրականացնող մեքենա չկիրառելու կամ հսկիչ-

դրամարկղային մեքենային միացվող համապատասխան սարք չտեղադրելու համար կազմակերպությունը կամ անհատ ձեռնարկատերը նախազգուշացվում է:

Վերոգրյալից հետևում է, որ տվյալ դեպքում խախտվել են «ՀՀ-ում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջները, մասնավորապես՝ ստուգման ակտում սխալ է նշված պատասխանատվության կիրառման համապատասխան իրավական հիմքը:

Ելնելով վերոգրյալից՝ Հանձնաժողովը եզրակացնում է, որ քննարկվող դեպքում ստուգման ակտով «Հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 1-ին կետի բ) ենտակետով նախատեսված տուգանքի փոխարեն պետք է կիրառվեր նույն օրենքի 7-րդ հոդվածի «դ» կետով նախատեսված դրույթը, որը նախատեսում է ընդամենը նախազգուշացում:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի և «Մաքսային ծառայության մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի պահանջներով հանձնաժողովը

### ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է՝

Չեղյալ համարել ՀՀ ՖՆ Գավառի ՏՀՏ 25.08.2014 թ-ի թիվ 6101613 ստուգման ակտը:

Հանձնաժողովի նախագահ՝



Վ.ԱՄԻՐՈՒՄՅԱՆ